



ՕՐԱԳԻՐ ՉՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ ՉՄԻՒՌՆԻԱ ՇԱԲԱԹ 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1873 ԹԻԻ 974

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպայի օրագիրը կը շարունակեն զրադիւ խտայն թագաւորին 'ի վէննա և 'ի Պէրլին ըրած այցելութեանց վրայօք : Վերջիւս—էմմանուէլ սիրալիր և փառաւոր ընդունելութիւն գտաւ յիշեալ մայրաքաղաքաց մէջ թէ 'ի կողմանէ ժողովրդոց և թէ 'ի կողմանէ կայսերաց Աւստրոհունգարիոյ և Գերմանիոյ : Ֆրանչիսկոս Երկուրդի կայսրն փափաքելով իւր բարեկամական մտերիմ զգայմանց և իւր յարգանաց ապացոյց մի տալ խտայն վեհապետին, պատուոյ հրամանատար և տէր (propriétaire) անուանեց զնա զօրագրի մը, որ յետ այսորիկ «Թագաւոր խտայն» անունը պիտի կրէ :

Պէրլինի մէջ ևս 'ի պատիւ Վերջիւս—էմմանուէլի մեծ զօրահանգէս և շքեղ հացկերոյթ մի եղաւ 'ի կայսերական պալատն, ուր 250 սեղանակիցք կը գտնուէին :

Այս սիրալիր ու փառաւոր ընդունելութիւնը յոյժ բերկրաւ տալաւորութիւն մի ըրաւ 'ի Հռոմ, ուր ժողովրդեան դահուկութիւնը հրապարակական ցոյցերով յայտնուեցաւ Աւստրիոյ և Գերմանիոյ դեսպանատանց առջև :

Այս ամեն եղելութիւնքը կապացուցանէ թէ խտայն, Աւստրոհունգարիոյ և Գերմանիոյ մէջ քաղաքային համաձայնութիւնը կատարեալ է. համաձայնութիւն որ փոխադարձ օգտից վերայ հիմնեալ լինելով, պաշտպանողական և յարձակողական դաշնակցութիւն ըսել է :

Գաղղիոյ մէջ միապետական և հասարակապետական կուսակցութիւնք կը շարունակեն իրենց փոխադարձ ամեն ջանքն 'ի դուրծ դնել. բայց

իրաց վիճակը տակաւին անորոշ է . քանզի Շանպորի կոմսը՝ Գաղղիոյ թագաւորական գահը նստելու համար պայմաններ կ'առաջարկէ միապետական կուսակցութեանը, որուն մէջ կը գտնուի բոլոր կղերքը : Սակայն առաջարկեալ պայմաններն զօրաւորութիւնն են այժմեան լուսաւորեալ գաղութ մէջ գաղղիացի ժողովրդէն, որ զկրօնամոլութիւնը կատէ և խղճի ազատութեան պաշտպան հանգիստցած է 'ի վաղուց անտի :

Այս ամեն դժուարութեանց պատճառաւ Հասարակապետական կառավարութիւնը ոչ սակաւ պաշտպաններ կը գտնէ ժամանակի մը համար ևս, և կը հաստատեն թէ երեսփոխանական ժողովը բացուելուն, պիտի առաջարկուի Մաք—Մահօն նախագահին իշխանութիւնը նորոգել հինգ տարուան համար, ըստ երեւմանց, այս առաջարկութիւնը քուէից մեծագոյն մասը պիտի ստանայ, և հետեւեալ պիտի ընդունուի :

Ռուսիան՝ ֆիվայի յաղթութեամբ փառաւորեալ, Մեծին—Ռիտանիոյ թագուհոյն հետ խնամական ազգակցութեամբ բարոյապէս դաշնակցեալ, և Գերմանիոյ հետ ունեցած վաղեմի ազգականութեամբ և այժմեան քաղաքային մտերիմ համաձայնութեամբ զօրացեալ, Ռուսիան կրեմք, որ իւր ընդարձակ երկաթուղիներովը հաղորդակցութիւնը զիւրացուցած է և օրըստօրէ կը յառաջդիմէ, իրաւամբ հսկայ կայսերութիւն մի կը համարուի, որ Եւրոպայի խաղաղութեան յարատեւ մնալուն զօրաւոր երաշխաւորութիւն մըն է :

Մեր այս գրուցածը կը հաստատուի Ռուսիոյ

կողմ (Չայն) յրադրոյն հետեւեալ յօդուածովը : «Պատերազմէն առաջ, Եւրոպան կը նկատէր զիւրաքան իրրեւ մեծագոր հսկայ մի, զոր պէտք էր ապարացնել որ և է կերպիւ : Իսկ այժմ որ դերմանական հսկայ մի գոյացաւ, Եւրոպան վերջապէս կը հասկընայ թէ սպառնալիք մը չեմք իրեն համար : այլ ընդհակառակն Եւրոպան կարողութիւն ունի յերաշխաւորութեանց ընդգդեմայն նոր զօրութեան, որ գոյացաւ 'ի կեդրոնի իւրում : Եւ որովհետեւ ոչ Գաղղիան, ոչ Անգղիան, ոչ Աւստրիան և ոչ Իտալիան կրնան զնոյն հզօր երաշխաւորութիւններ ներկայացնել զատ 'ի զատ, Եւրոպան այժմ բարի տրամադրութիւններ կը ցուցնէ մեզ համար : վասնզի մեծագոր Ռուսիա մը և ազատ իւր շարժմանց մէջ, հարկաւոր է Եւրոպայի : Հետեւեալ գերմանական կայսերութեան հաստատութիւնն մեր միջազգային կացութեան նկատմամբ, խիստ օգտակար եղաւ . ուստի Գերմանիոյ միաւորութեանն ցարժակից լինելով, Ռուսիոյ քաղաքականութիւնը կատարելապէս հասկցաւ իւր օգուտները » :

Յիշեալ օրագիրը կեղծակցուցանէ թէ պէտք է հաստատուն պահել Ռուսիոյ և Գերմանիոյ մէջ եղած բարեկամութիւնն, որ կապահովցնէ կրեւ, զանգորութիւնն Եւրոպայի, որպէս և զկանոնաւոր ընթացքն ներքին զարգացման այս երկու տէրութեանց :

Նիւ—Եորքի մէջ բաղմամբիւ պանքաներ սրնանկանալով և մեծամեծ ֆուստու պատճառ լինելով, վաճառականաց մէջ ընդհանուր արհաւիրք և մեծ վախ տեղի ունեցան և պօրսան գոցուեցաւ քանի մը օր : Բարեբաղդաբար, Ամերիկայէն հասած վերջին լուրերն կը ժանուցաւ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Հետեւեալ Բնագատութիւնն, որ Հայաստանեայց վեր Ս. Եկեղեցւոյն ուղղափառ դաւանութեան ամենափափուկ խնդրոյն կը վերաբերի, արժան համարեցանք Հայրենիք լրագրին օրինակելով, մեր ընթերցողաց հաղորդել, «Բնագատութեան հիմնաւոր կամ անհիմն լինելոյն որոշումը՝ ամենայն Հայոց մեր վեհափառ կարողիկոսին եւ սուրբ Սինօյի թողով, ըստ եկեղեցական օրինաց : Բանգի խնդիրն ծանր է :

Մուրատեանց արժաւ. տէր Մեղրեանդեկ վարդապետի հեղինակած եկեղեցական պատմութեան վրայ, թէ և ասկէ առաջ երեք անձանց կողմանէ երեք տեսակ ըննադատական յօդուածներ զրկուած էին մեղ, սակայն նոքա տակի նախնաժողութեամբ, կրկն և անարգանօք գրուած ըլլալուն՝ մերժեցին և չուզեցին Եւրոպայի Արժանապատուութիւնը վիրաւորել :

Բայց այս անգամ սոսկական սարկաւ աղի մը կողմանէ մեղ հաղորդուած յետագայ համեմատեալ ատուութիւնը հրատարակել արժան համարեցինք, աներկմիտ ըլլալով որ Նորին Արժանապատուութիւնն ալ կրտիք, օրինաւոր վիճաբանութեամբ դայթակղեալ մտքերը հանգստեցնելն ու ճշմարտութիւնն երեւան ածելն :

ԲՆԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՄԵԼԻՍԵՆԵԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Հրատարակուած գրքի մը քննադատութեան մասին ամեն մարդ ազատ է : Բայց այս պատմութիւնն այն տեսն յարգի է, երբ ճշմարտութեամբ է :

Քննադատութեան մէջ անձին նայելու չէ, այսինքն աշտեւելու չէ, այլ արդարութեան ու ճշմարտութեան

ճայնին նայելու է : Ուստի մեր ևս այդ մտքը թէ և ունի մեր կարծիքը ահա հրատարակուած կը յայտնեմք :

Տարիէն աւելի է, որ այս գիրքը հրատարակեցաւ : Ի նպատակ գրքին լրագրոյ մէջ գովաւոր իսկ չուայեցաւ : Բայց մեր զարմանք մեծ եղաւ, երբ մէկ քանի վարժապետք ատանց քննադատական կարծիք յայտնելով՝ զայն ընդունեցին իւր անխալ գիրք գասական :

Հայաստանեայց սուրբ եկեղեցին՝ որ 'ի դարուց անդր մարտնչեալ հրեակրօնական մոլորութեանց դէմ, այս մարտիրոս եկեղեցին՝ որ արեւելուայ ծոցոյն մէջ գեռ կը պատսպարէ Հայ ազգայնութիւնը, իւր այն սահմանէն՝ զոր 'ի Քրիստոս և Սուրբ Հոգի անտի ունէր, երբէք չընդլայնուի մինչև ցարդ հաստատուն մնայ 'ի հաւատս :

Ի նախ 'ի Սուրբ Հոգի հալածանք, հարուածք և աշխարհի փառք փորձ փորձեցին այս Ս. եկեղեցւոյ հիմն խախտել և տապալել 'ի նախ 'ի Յունական, Լատինական և Բողոքական ահաւոր զօրութիւնք յանուն Քրիստոսի փորձեցին այս եկեղեցին դռն պառակտել և

Նա 'ի հաւատս անստան կեցաւ : Եւ այն հաւատով, այն խոստովանութեամբ, այն նախնաժողութեամբ գրք Ս. Պրիգոր, Սահակ, Մեսրոպ ապրեցան և հանգեան, ողջամիտ և բարկաշտ Հայն նոյն հաւատով, նոյն խոստովանութեամբ, նոյն նախնաժողութեամբ ապրեցաւ, դեռ կապրի և պիտի ապրի՝ յաւիտեան :

Բայց այսօր ևս Հայ եկեղեցին տաքնաւ ունի, ոչ այնքան յարտաբուստ, որքան 'ի ներքուստ . ոչ այնքան ճշմարտեանց և Բողոքականաց կողմէն՝ որքան իւր ծոցոյն մէջ սնող և իւր հացիւ ապրող խումբ մի մարդկան :

Սորա են, որք իբր Հայ, իբր անգամ Ս. եկեղեցւոյ կը ջանան ազգը պառակտել, բարեպաշտ սրտից մէջ ուրում ցանել, եկեղեցւոյ պաշտօնեայքը պախարակել և վատահամարել, եկեղեցւոյ Ս. Հարց վարդապետութեանց և գրուածոց ունեց հանել, ունեց չհանել, և զայն ըստ հաճոյս իւրեանց յապաւել կամ երկարել :

Վերջապէս Նոր, անկախ եկեղեցի մի կազմելոյ յուսով երողել : Ո՞ր գիտէ, թէ սորա վարձեալ չին Եւրոպայէն :

Գաղտնի յարձակում մի է այս, որոյ դէմ Ս. եկեղեցւոյ հաւատարիմ պաշտօնէի պարտքն է անպոն հակել և զիմաղրել : Այս գիրքն ևս որովհետեւ քիչ չատ հակառակ է Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ ուղի վարդապետութեան, պարտք համարեցին քննադատել, հեղինակին ևս պարտք թողել զայնս, և թէ համա միտ չէ Բողոքականութեան :

Սուրբ եկեղեցւոյ եօթ խորհրդոց մեկնութեանց սխալ բացատրութիւն :

Ա. ՄԻՐՏՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց Ս. եկեղեցին կընդունի և կը շարունակէ թէ Մկրտութեան Ս. խորհուրդն է 'ի մաքրութիւն մեղաց և յորդեգրութիւն հօր Սատուոյ :

Բողոքականք կընդունին թէ Մկրտութիւնն հաստատուած է 'ի ճշման մաքրութեան մեղաց և այլն : Գրքին հեղինակը առաւել բողոքականաց համամիտ է . վասնզի (յէջ 36) կը շարունակէ 'ի ճշման լուսաման և ազատութեան 'ի մեղաց և որդեգրութեան սուրբ Երրորդութեան :

Վերջին խոստովանութեան մէջ ինչպէս յայտ է, Մկրտութիւնն չունենար այն սրբարար զօրութիւնն, զոր Ս. եկեղեցին կը շարունակէ . վասնզի 'ի ճշման և կամ կը ճշմանակէ բակը՝ խորհրդոյն սրբարար զօրութիւնը ուրանալ է, և թէ՛ այն ատեն սովորութիւն մի եղած կը լայն այն : Եւ սովորութեան մի հաւատք ընծայելն այնքան կարեւոր չէ :

Սղանդաւոր Մկրտութեան և Հաղորդութեան համար կը բարոյցն թէ լոկ Քրիստոսի պատուիրելոյն համար է, որ կը կատարենք, և թէ խորհուրդք՝ քրիստոնէական ներքին սովորութիւնք են և ոչ այլ ինչ(1) : Ուստի

(1) «Եւ շնորհիւ սմա զուրա ցայս, յորում մկրտի այժմ, 'ի բողոքիւն մեղաց եւ յընդունելութիւն Հոգւոյ սրբոյ, յորդեգրութիւն Հօրդ երկնաւորի եւ 'ի

նեն թէ առեւտրական այս տաղնապը բոլորովին դադարեցաւ կառավարութեան բարեխնամ գործակցութեամբը :

Կայսերական հրովարտակաւ հետեւեալ փոփոխութիւններն տեղի ունեցան Բարձրագոյն Դրան պաշտօնէից մէջ :

Արդարութեան բարձրագոյն, ատենին նախագահ Միտհաթ փաշան իւր պաշտօնէն արձակեցաւ, և անոր յաջորդեց Մեծ—Եպարդոսութեան խորհրդական խորշիտ փաշան :

Զօրաբանակին հինգերորդ զօրաբաժնին հրամանատար Եպիքր փաշան Ատանայի վալի կարգեցաւ, և անոր տեղը՝ զինուորական հոգաբարձութեան տեսուչ իղէթ փաշան հինգերորդ զօրաբաժնին հրամանատար անուանեցաւ : Չինուորական հոգաբարձութիւնն Արիֆ փաշային, և Գաղատիոյ կուսակալութիւնն Տէրվիշ փաշային յանձնուեցաւ :

Թէքլիմարդի միւթէսարըֆ Ապէտտին պէյը իւր պաշտօնէն արձակեցաւ, և հանգուցեալ Ատլի փաշային որդէն Ռէշիտ պէյը՝ ամէտի գրասենեկին անդամ՝ անուանեցաւ, և այս առթիւ, Սանիէ Միւթէմայիլի աստիճան ընկալաւ :

ԱԶԳԱՅԻՆ

Արշալոյս նախընթաց թուով ուրախ սրտիւ ծանուցինք լսեմա . Նուպար փաշային յատուցան միւլիբութեան բարձրանալն : Գահիրէի մէր մեծարգոյ բարեկամներէն մէկը՝ կայսերական այս աստիճանաբաշխութեան վրայօք հետեւեալ մանրամասն տեղեկութիւնները կրճադրողէ մեզ :

Անցեալ ամսոյ 26ին օգոստոս . Սուլթանին թիկնապաշներէն Ռէշիտ պէյը պատերազմական թալիս շող ենաւով Կ. Պօլսէն հասաւ ի Գահիրէ : Նորին վսեմութեան յանձնուած էր և կրէքերէ զկայսերական հրովարտակն, որով ըստ խնդրոյ բարձրապատիւ խըտիվին, իւր արտաքին գործոց պաշտօնէս լսեմա . Նուպար փաշային միւլիբութեան մեծ աստիճանը կը շնորհուէր :

Ուստի յիշեալ ամսոյ 28ին այս հրովարտակը մեծ հանդիսի կարգացուեցաւ ի փոխարքայական պալատն Գասր—էլ—Նիլ կոչուած . ուր ներկայ էին եղիպտական իշխանութեան բոլոր նախարարներն՝ իրենց համագլխատովք : Երկու զօ-

րախումբ պարտին բակը՝ յերկուս բաժանեալ բարեկիցանաձ էին . յորժամ զինուորական նուազարանայ ներդաշնակութիւնն դադարեցաւ վսե . թալաթ փաշան ի լուր ամենեցուն սխաւ կարդալ վեհա . Սուլթանին հրովարտակը . զոր լմնցնելէ ետեւ, ակնածական յարգանք յանձնեց ի ձեռս խըտիվին : Նորին Բարձրութիւնն ևս իւր ձեռօքն յանձնեց զկայսերական հրովարտակն իւր սիրելի նախարար հայկազուն Նուպար փաշային իւր սովորական մարդասիրութեամբ շնորհաւորելով զնորին վսեմութիւնն, Յետ այնորիկ բոլոր հանդիսականք՝ իրենց խնդակցութիւնները բաղում սիրով յայտնեցին արտաքին գործոց պաշտօնէին :

Միևնոյն շքեղ հանդիսիւ՝ կարգացուեցաւ նաև դանձուց պաշտօնէս լսեմա . խմբելի Սատըք փաշային յաակացեալ կայսերական հրովարտակն . որով նոյնպէս միւլիբութեան աստիճանը շնորհուած էր Նորին վսեմութեանը :

Երկու օր ետքը վսեմա . Նուպար փաշան՝ այս բարեկամն առթիւ, 24 անձանց համար յոյժ փառաւոր հացիկերսթ մի տուաւ յապարանս իւր . ուր ըսց ի կայսերական թիկնապաշ Ռէշիտ պէյէն, ներկայ էին նաև գահաժառանգ իշխանը, բարձրապատիւ թէքլիք փաշան, իւր եղբարքը, փոխարքայական տանը վերաբերեալ փաշայք և բարձրաստիճան նախարարք :

Վսեմա . Նուպար փաշային յոյս մեծ աստիճան բարձրանալն՝ որչափ սք պարծանք և անզուգական ուրախութիւն մըն է ընդհանուր Հայոց ազգին, նոյնպիսի ազգային խորին երախտագիտութեան արժանի է վեհ և ազնուական զգայմունքը բարձրա . խըտիվին որ գլխաւ վարձարել մարդասիրաբար զհանձարեղ և զկենցաղագէտ հաւատարմի նախարարս իւր :

—Գարձեալ Ազգքսանդրիայէն Սեպտեմբեր 12 ամսութեով այսպէս կրգրեն յիշեալ բարձր պաշտօնաբաշխութեան նկատմամբ :

Այս վերջին առուրց երեւելի գէպքը՝ վսեմատեարց Նուպար փաշային և խմբելի Սատըք փաշային յատուցան միւլիբութեան բարձրանալն է : Այս երկու նախարարաց յիշեալ աստիճանին տուելութեան մէջ հասարակութիւնն արժանաւոր վարձատրութիւն մի կըսանան ի Նոյնին վսեմութեանց ի ձեռս բերելով յաջողութեանը, միոյն՝ Եղիպտոսի դատաստանական նոր բարե-

կարգութեան առթիւ, և միևնոյն՝ մեծ փոխառութեանն առթիւ : Բայց զիտրդ և իցէ, այս բարձր աստիճանին տուելութիւնն ապացոյց մըն է սիրալիր շնորհացն զորս յիշեալ նախարարները կը խոյսեցնէին թէ ի Կ. Պօլիս և թէ բարձրա . խըտիվին առջև : Այս բարձր աստիճանը որ Նուպար փաշայէն առաջ, երբէք չէր շնորհուած քրիստոնէի մը յեղիպտոս, և սր իսմայիլ Սատըք փաշայէն առաջ, երբէք ուրիշ չէր տրուած բայ ի խըտիվին ընտանեաց անդամոց, այս բարձր աստիճանը, կրտսէք, կը հաւատարմեցնէ ըզ յիշեալ երկու նոր միւլիբները փոխարքայական զերգաստանին իշխանայ հետ : Այս եղեւթը միայն իմացուեցաւ այժմ՝ Նորին փոխարքայական Բարձրութեան խօսքին իմաստը, զորս ի վերադարձին ի Կ. Պօլսոյ դրուցեց երբ ընդունուեցաւ ի գահաժառանգ որդւոյ իւրմէ, չորս ջաղատեալ ի գլխաւոր պաշտօնատարաց որք գործակից եղած էին նմա իւր քանի մը ամսուան փոխանորդական կառավարութեանն Եղիպտոսի . Ո՞վ որդեակ իմ սիրելի . . . իմ որդիս նմ է որ կը ծառայէ ինձ հաւատարմութեամբ՝ զորոցիւր է խըտիվը :

«Ի սկզբան բան մի չէին հասկցած այս աստիճանէն, որուն գաղտնի իմաստն այժմ միայն յայտնուեցաւ : Նորին Բարձրութիւնն անշուշտ սքօղեալ ակնարկութիւն կընէր անախակալ աստիճանին, որով պիտի վարձատրուէին իւր երկու նախարարներն, որոց վերայ մեծ վստահութիւն ունի, իւրեւ ի վերայ երկու զօրաւոր բաղկաց, որք պիտի օգնեն նմա ի շարունակել և ի հաստատել իւր բարոյական մեծ շէնքը :

Հնդկաստանի բնակիչ ազգասէր և խոհական բարեկամ մի հետեւեալ տխուր տեղեկութիւնքը կը հաղորդէ մեզ, որոց վերայ ամենայն Հայոց վեհափառ սրբազնասուրբ կաթողիկոսին ծանր հուշադրութիւնն և ազգասիրական խնամքը կը հրաւիրեմք խոնարհաբար :

«Յաւով սրտիւ տեսմ ձեզ թէ՛ ի Հնդկիս Հայկական ընթերցասիրութիւն գրեթէ ոչ գոյ . և որ առաւել քաւալին է, բնակիչք երկրիս՝ ըստ մեծի մասին, չաւաղն Եւրոպայոց հետեւելով՝ կրօն, ազգութիւն և լեզու ի տատանման և ի տաքնապի կորստեան դասին : Իրաց այս տխուր վիճակն եթէ այսպէս չարունակեցէ, կարելի է զի յետ ժամանակաց անհետ եղիցի Հայութիւնն ի Հնդկաստան : Քանզի արդէն լսեմք թէ՛ ի Կալիֆթա

Մկրտութեան և Հաղորդութեան Հայկական դատանութեան համեմատ ընաւ կարեւորութիւն չտալով՝ մին լո՛ւ ջուր և միւսն սոսի Հայ ու գինի կընդունին :

Գրքիս հեղինակն (յէջ 35) երբ պիտի սկսի եկեղեցւոյ Ս. Խորհրդոց վրայօք, իւր բուն ազանդաւոր այսպէս կը խօսի, «Պատմական յիշատակարանք՝ Հայաստանեայց եկեղեցւոյ նկատմամբ, առանձինն ոչ ինչ չեն տանդեր քրիստոնէական ներքին սովորութեանց մասին» :

Բողոքականութեան ասիէ աւելի նպատաստը ծառայութիւն կարելի չէ ըլլալ, զոր գրքիս հեղինակն մատուցանել ձգտած է, թերեւ մոռնալով՝ որ ինքն Հայ—եկեղեցւոյ պաշտօնէս վարդապետ մի է : Բայց այսքան քիչ լայնուոն համար կը յաւկու . «Աստի . . . մեր եկեղեցին առաջին շրջանին(2) կը վարուէր Առաքելական սովորութեամբ» :

Հոս իւր ծառայութիւնն կատարեալ կը ըլլայ, վստիկ կուգէ յայտնել թէ այժմու Հայ եկեղեցին խտորած է առաքելական շաղկէ, այսինքն այժմ չվարուիր Ս. Պաքելական սովորութեամբք : Բայց մեր գիտեմք, որ Հայոց Ս. եկեղեցին յԱռաքելոց անտի միևնոյն տաճանին մէջ կայ : Նա ոչ յամ կամ յաճեալ խտորած է . Նա Քրիստոսի բանին համեմատ կը դառնայ, «Որ հաւատայ և մկրտի, կեցցէ» : «Առէք, կերէք, մարմինս է . . . ի թողութիւն մեզայ» :

Գրքիս հեղինակն (յէջ 36) երբ անդամ ընկղմամբ ըսածին աւետարանական վկայութիւնը սխալ է : Վստիկ գիտող, զոր մեր եկեղեցին ընդունած է և կը կատարէ Քրիստոսական պատուէր չէ, այլ Պօղոս Առաքելոյ առ Հռովմ . Չ զուլ և համար գրուած խօսքին վերայ հիմնուած նախնական աւանդութիւն մի է :

ժառանգութիւնն արքայութեանց երկնից» : Մաշտոց : Կանոն Մկրտութեան :

(2) Առաջին շրջան քսելով՝ գրքիս հեղինակն միեւնեցութեամբ Լուսաւորիչ իմացնել կուգէ :

Բ. ԴՐՈՇՄ

Հայաստանեայց Ս. եկեղեցին կը դառնայ և կը հաւատայ թէ Դրոշմի Ս. Խորհրդով մկրտեալն ընդունարան կը ըլլայ Հոգւոյն սրբոյ շնորհաց և կը զօրանայ աստուածային զօրութեամբ(3) :

Գրքիս հեղինակն (յէջ 36) տարբեր կը դառնայ, վստիկ գիտող . «Յետ մկրտութեան հաւատացեալն կը զօրանաւ և կը կրկնուէին խորհրդաւոր գործում ի նշան զօրութեան և զինուորութեան Քրիստոսի» :

Թողով գրքիս հեղինակին ի նշան դառնութիւնը, որ մոլորութիւն է, հարցանեմք իրեն, թէ ինչո՞ւ մկրտելն Հոգւոյն սրբոյ շնորհաց ընդունելութիւնը երբէք չլուծ չէ, զոր Ս. եկեղեցին կը զօրանայ և կը հաւատայ : Նաև չեմք հասկնար, թէ խորհրդաւոր գործը ըսելով ի՞նչ կ'իմանայ . Առաքելոց ժամանակի կատարուածին պէս .— անշուշտ, վստիկ Նոր Կտակարանէն բերած իւր մկրտութիւնքն զայն կ'ակնարկեն : Բայց այն ատեն այժմու պէս գրուած կ'երուի չըկար, այլ հաւատացեալք Ս. Առաքելոց ձեռնադրութեամբն ու աղօթիւ քն իսկ և իսկ կընդունէին զՀոգին Սուրբ : Ս. եկեղեցին ևս յԱռաքելոց անտի այնպէս դառնալով կը հաւատայ, և օծութեամբ և աղօթիւ կը կրկնատարէ :

Ուստի կը դարձանամք արդարեւ, թէ գրքիս հեղինակն ինչո՞ւ եկեղեցւոյ դառնութիւնն այսքան տարբեր կը բացատրէ . ինչո՞ւ Ս. Խորհրդոյք ի նշան բացատրելով՝ իւր առաքելական սովորութիւնը նկատել տալու այսքան կը ձգնի . եթէ իւր նպատակն ազանդաւորութեան նպատակն չէ :

Գ. ՀԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ

Հայոց Ս. եկեղեցին Հաղորդութեան խորհրդոյ հացն ու գինին Քրիստոսի մարմին և արիւն կը դառնան, և

(3) Առաքեան զնորսն ամենասուրբ Հոգւոյ ընդ իւրոյս . գիտր օծցի, եղիցի նմա ի սրբութիւն . . . : Մաշտոց : Կանոն Մկրտութեան :

թէ ի Քրիստոսէ հաստատուած խորհրդէն այն ի թոյլութիւն մեզայ :

Ազանդաւորք կըսեն, մարմին և արիւն չէ, և թէ հաստատուած է այն լո՛ւ Քրիստոսի յիշատակին համար :

Գրքիս հեղինակն նոյա համաձայն կը խօսի, վստիկ (յէջ 47 և 37) «Քրիստոսի յիշատակ նշան Նոր Կտակարանի և նշան հաւատացեալոց մկրտութեան ընդ Քրիստոսի և ընդ միմեան» գրած է :

Բայց Ս. եկեղեցին կընդունի և կը հաւատայ թէ սուրբ Խորհրդոյք հացն ու գինին ո՛չ թէ ի նշան, այլ իսկական մարմին և արիւն Քրիստոսի է, և թէ կընդունին հաւատաւոր ճաշակողք՝ կենալ, յոյս, յարութիւն և թոյլութիւն մեզայ :

Կըսեն Ազանդաւորք թէ «Այս է մարմին իմ»՝ Գրքիստոսի այս խօսք «մարմինս է» կը նշանակէ ըսել է :

Կըստատմանի սուրբ եկեղեցին, թէ «Այս է մարմին իմ»՝ Քրիստոսի այս խօսք բուն մարմինն է ըսել է :

Եկեղեցւոյ և Ազանդաւորաց մէջ երկար ատենէ ի վեր վեճ կայ : Բայց ճշմարտութիւնն ո՞ր կողմանն է, զայն առ այժմ թողով՝ գրքիս հեղինակին դառնալով : Սքանի որ ի նշան կամ կը նշանակէ ընդունած է, ուրեմն Բողոքականութեան համաձայն է :

Սո՛ գրքիս հեղինակն (յէջ 37) կը գրէ «Եղբարց հետ հաշտուիլ և ազատ դոհութեան հայր բեկանել» : Այս խօսքով Բողոքականաց այժմու դրութիւնը կարծեմ կ'ակնարկէ : Վստիկ սուրբ նախ կը զօրանան և ապաքեկանելով կը ճաշակեն : Բայց Ս. եկեղեցին լո՛ւ գոմարեան հաց երբ դառնաւ է : Ո՛չ ապաքեկան Պօղոս Առաքելոյ առ Ա. Կորնթ . ԺԱ . 23—25 գրածին պէս ընդունած է, և կը դառնայ միշտ Քրիստոսի մարմին և արիւն : Ինչո՞ւ եկեղեցական պատմիչս լուծ է . ինչո՞ւ չըրբի կամ տեղեկութիւն տալ հաճած չէ եկեղեցւոյ այս նախնական դառնութեան վրայ :

(Շարունակելի)

գրեթէ բոլոր Հայք անգլիական լեզուաւ խօսին և յիշեալ զհայկա Սնդիկացոց յաճախեն և ասի թէ այս աղգու-
րացութեան պատճառն իրր թէ մեր հագեւորականաց
աղիտութիւնն է . որք անբաւական են խնամութեամբ
խոհեմութեամբ և քրիստոնէական չորսութեամբ կա-
ռաւարել զմոզութիւնն : Բայց մեք կարծեմք թէ պատ-
ճառանքս այսոքիկ անհիմն են , կամ ոչ կարեն խոչ լինել
բարեպաշտութեան , եթէ գրացումն և եռանդ աղգու-
թեան չլից մեռեալ . բանդի սէրն կարող է հարթ և հա-
ւասար առեալ զպարտաժ լերին . այլ գործողութեամբ
անհետ եղեալ է նա յաղգի մերում ի Հնդկիս : (1)

«Գրուցէ ի Պարսկաստան : Ժողովուրդն Հայոց յետ
այսորիկ յաջողեցի մտանել ի շաւիղ աղգաւորական
յառաջողութեան . քանզի շինութիւնք երկրորդու-
նաց զկրօնացանկով զհաղորդակցութիւնն ընդ եւրո-
պայի ազգաց և բազմութիւն օտարականաց եկեմուտ
առեալով ի յիշեալ երկիրն , յուսով է թէ նորովեալ
խորհումն կամ գորշլին Պարսկի ի քրիստոնէից ինքնին
տկարացի և հեղեղեալ անհետ եղիցի . և յայնժամ ան-
տարակոյս արշալոյսն քաղաքակրթութեան ծագեցի ի
Պարսկաստան ի միւրթարութիւն տառապեալ աղգի մե-
րոյ անդանօր , և ի յառաջագիտութիւն նոյն իսկ Պարսկի
ժողովրդեան . որ ժամանակաւ բազկացեալ էր յ30 մը-
լիոնէ , մինչդեռ այժմ հազար թէ վեց միլիոն մնացեալ
է : Եւ պատճառն նուազութեան նոյնն անշուշտ մոլե-
ռանդութիւնն է . որով այնչափ կուրացեալ է Պարս-
կաստան , որ զկրօնուտ իւր անգամ ոչ տեսանէ : Բայց
եթէ վերջիշեալ խորհումն բարձրի , որպէս յոյժ հաւա-
նական երեւի , յայնժամ և Պարսկաստան աղգ մեր ա-
նեցի և բազմացի , Աստուծով , առաւել քան զթիւ
Հայ գաղթականացն , զորս Եւրոպայի արքայն անդու-
րանութեամբ բերեալ է ի Հայաստան յԱպահան :

«Իսկ ի Հնդկաստան Հայոց գործողութեամբ , յոյս ոչ
զոյ . զի ուր երայրութիւն լինեն բարոյական պակասի ,
անդ ամենայն ինչ ձախորդ ընթանայ» :

Սրբեկէ մեզ կարծել , թէ ներկայ նամակին յարդոյ
հեղինակն չափազանց սե գունով կընկարագրէ Հնդկաս-
տանի և մասնաւորապէս Կալիպթայի Հայ բնակչոյ ոչ
աղգաւորական ընթացքը : Քանզի մեք գիտեմք թէ
յիշեալ մայրաքաղաքին մէջ աղգային Մարդասիրական
Վարդոյ մի կայ , որ հոգեւոր էր ժամանակաւ : Նոյն
գարդը տպարան մի ևս ունի , որ այժմ գործողութեամբ
անգործածելի վիճակի մէջ կըգտնուի . բայց կարծեմք
թէ աղգային հիւրանոցն որ կարօտեց համար շինուած
է , ի բարեօր կայութեան հաստատուն կըմնայ :

Արդ աղգային այս վաղեմի հիմնադրութիւնքն , որք
բաւական եկաւուտ ևս ունին , կարծեմք , յանշարժ կալ-
ուածոյ , միթէ չլիցն ապացոյց աղգաւորական զգաց-
մանց Հայոց Հնդկաստանի , թէ և այժմ ի ծագեալ
վիճակի ոչ գտանին նոյն հիմնադրութիւնքն :

Բայց յայնժամէ , յատուկ յիշատակութեան արժանի
կըստեմք իւր Կալիպթայի մէջ նորոգ հաստատեալ տպա-
րան գերա . տէր Յովհաննէս Սալկիան , խաշակիր
աւագ քահանայի , որոյ արգեամբ և վերատեսչութեամբ
այս տարի ի լոյս ընծայեցաւ նոյն տպարանին մէջ «Վա-
հան հաւատոյ» կոչեցեալ գրքոյն համառոտութիւնն : (2)
Ինչպէս յայտնի է , այս գիրքն Չամչեան Հ. Մկրտչեալ
վարդապետի աշխատասիրութիւնն է . որ Հայաստան-
նայց սուրբ Եկեղեցոյ ուղղափառութիւնը զօրաւոր
վաստեղով և վերաբերեալ կըպաշտպանէ :

Արշալուոյ Բուենի 16 թուոյն մէջ , Կիպրոսէն
մեր ընդունած անգլիկոսութեանց համեմատ նոյն
կղզւոյն Հայոց աղգային վարժարանին խիզճ ու
անկարգ վիճակին վրայ մեր ցաւը կը յայտնէինք :
Բարեբաղդարար նոյն աղգափնտա վիճակը
հաստատուն չմնաց : Քանզի Կիպրոսէն մեր ըն-
դունած վերջին լուրերն կը ցոյցանային թէ Ս.
Երուսաղէմոյ սրբազան Պատրիարքն վաղեմեայ
է նոր հոգեւոր Հովիւ մի յաւաքիկել ի յիշեալ
կղզին , որ է արժա . տէր Մարգարէա ծայրագոյն
վարդապետն : Այս ուսումնական Ս. Հայրն
տեսնելով վարժարանին ձախորդ կայութիւնն ,

(1) Եւ միւրի գտանի՞ տէր ի հայաբնակ այլ երկիրս :
Մեք ցաւ ի սիրտ առեմք քե ոչ տեսանեմք զայն ոչ ի
Թուրքաստան , ոչ ի Պարսկաստան եւ ոչ այլուրեք :
Ծանօ . Ա. Բ. :

(2) Այս նորատիպ գիրքը նուիրեալ է Պարսկաս-
տանի եւ Հնդկաստանի բարեխնամ Առաջնորդ գերա-
տէր Գրիգորիս Ս. արքեպիսկոպոսի եւ յորմէ օրի-
նակ մի ընկալար յանգեալուն շաբաթու : ՆՈՅՆ

աղգաւորարար ձեռք զարկեր է բարեկարգել
զայն՝ աշակերտաց զլիսաւոր ուսուցչի պաշտօնը
իւր վերայ առնելով . հետեւաբար կը շուսացուի
թէ Կիպրոսի աղգային վարժարանն շատ ժամա-
նակ չանցած , մինչդեռ բարեկարգութիւնն և մի
և նոյն յառաջողութիւնն պիտի ունենայ ,
զորս արժա . վարդան վարդապետն Առաջնոր-
դութեան օրովն կըլսէինք ու Արշալուոյ միջոցաւ
ևս հրատարակած էինք :

Առաջով Կիպրոսի Հայ հասարակութիւնը մեծ
վաստակութիւն կըցուցնէ իւր հոգեւոր Հովիւին
հայրական աղգօք ուստ ջանից և ուսումնասիրա-
կան եռանդեան վերայ . որք անշուշտ արդ-
եամբք և յաջողութեամբ պիտի պատկուին ,
եթէ նոյն կղզւոյն աղգային երեւելիներն միա-
բանութեամբ գործակից լինին իրենց բարեխան
Առաջնորդին :

ԵՐԵՄԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Յորմէ հետէ Նորին Սրբաշնութիւնն հաշտա-
րար պաշտօնիւ իբրեւ Պատրիարքական Տեղա-
պահ ի քաղաք մեր հասած է , զգործողութեամբ
տակաւին գործ մի տեսած չունի : Քանզի ժո-
ղովրդեան երկպառակ կացութիւնը կը շարուն-
անուի և զայն դադրեցնելու ու եղբայրսիրու-
թիւնը նորոգելու համար ջանք մի չեմք տեսներ
ի կողմանէ մեր առժամանակեայ Պրիւստիանին :
Արդեօք ի՞նչ նպատակ ունի իրաց այս ոչ խա-
ղաղ վիճակը երկարացնել ուղեւորով . միթէ առ-
ժամանակեայ տեղապահութիւնն մնայուն տե-
ղապահութիւն կը յուսայ . . . :

Հայրենիք լրագրոյն 163 թուոյն մէջ Ամասիոյէն
գրուած նամակ մի կըլսեցեալք . որուն մէջէն
յուսօք արտի հետեւեալ պարբերութիւնը քաղե-
լով մեր ընթերցողաց կը հաղորդեմք :

«Գերա . Եղեւսեան սրբազանի իղմիր գնալուն
լուրն ալ տեղւոյս (Ամասիոյի) ժողովրդեան մեծ
ցաւ պատճառեց : Զարմանալի բան . երէկ խը-
ռովարար համարուած եպիսկոպոս մը այսօր
ուշիմ , արթուն ճանչուելով , խաղաղութիւն
վերահաստատելու պաշտօնով Զմիւռնիա կը-
ղրկուի . . . »

Կաղաչեմք աղգաւորարար զգերա . Եղեւսեան
եպիսկոպոսն որ հաշտարար ողւոր աշխատի
սուտ հանել Հայրենիքն մէջ իրեն տրուած խոռ-
վարար անկանք և արդարացնել Պօլսոյ Պատ-
րիարքարանի ընտրութիւնը իւր խաղաղարար
պաշտօնը օր յառաջ ի գործ դնելով , ինչպէս
որ արժան է Քրիստոսի ճշմարիտ աշակերտի մը :

Արշալուոյ 665 թուոյն մէջ հետեւեալն հրա-
տարակած էինք .

. . . «Պէտք է մէջ (Ս. Պօլսոյ) Սովորի յարդոյ Կա-
րապետ Էփէնտին Յակոբեան , որ անգլիական լեզուի
գաղափար է , անգլիացի օրիորդի մը հետ ամուսնացի է :
Հայաստանեայց սուրբ Եկեղեցոյն արարողութեամբ , և
պատկի խորհուրդն փառաւորապէս կատարուի է ի
գերա . տէր Խորեն Ս. Արքեպիսկոպոսն , որ այս առ-
թիւ պարագայի յարմար պատուական առեւտարութե-
թիւն մի բերէ է ի մեծ զոհանակութիւն բոլոր հանդի-
սականայ» :

Ինչպէս պարզի մեր պատու արժան թղթակցել յիշեալ
յոգեւածը կարգաւոր , յետագայ տեղեկութիւնները կը-
հաղորդէ մեզ :

«Ընթերցելով ի թիւ 965 Արշալուոյց՝ Կարապետ
Էփէնտին Յակոբեանի ամուսնութիւնն ընդ անգլիացի
օրիորդի , որ եղեալ է Եւստ Ժիւր Հայաստանեայց սուրբ
Եկեղեցոյ , ի միտս բերի զայս թէ աստ ի Ս. Պետր-
բուրդ յաճախողոյն ևս պատահին ոյսպիսի ամուսնու-
թիւնը , մանաւանդ յընթաց վերջին տասն ամաց :
Զոյցմանն հետաքրքիր եղեալ՝ տեղեկացայ յարձանու-
գրական մատենից Եկեղեցոյն և գտի զի ի 1864 ամէ
մինչև 1873 ամն ընդամենայն 16 ամուսնութիւնք եղեալ
են ի մայրաքաղաքիս . յորոյ ութն հայազգի երիտա-
ւարդք ընդ հայազգի օրիորդաց են ամուսնացեալ , և 8ն
հայազգիք ընդ օտարազգի օրիորդաց են պատկաւ : Ար-
դարեւ զարմանալի է , զի մինչդեռ չի հաշուեալ չէր
այնչափ նկատելի , և թէ՛ բազումք ի սոցանէ են այն-
պիսի անձինք , որք իսպառ գերմաներէն և զաղղորդէն
լեզուայ չեն ծանօթ . բայց եւ այնպէս մեծաւ մասամբ
այսպիսիք ամուսնանան ընդ օտարազգի օրիորդաց : Թէ՛
պէտեւ հայկազն օրիորդք բազումք զոն ասա , որք այն-

պէս կան և մնան ի տան՝ սպասելով բացման դրան բաղ-
ղի իւրեանց : Կայնալ և ի 1840 ամէ մինչև 1864 ամն
որ է յընթաց 23 տեայ՝ եղեալ են տասն ուսականութե-
թիւնք թուով 12 . յորոյ դարձեալ 8 թիւն ամուսնացեալ
են հայազգիք ընդ հայազգի օրիորդաց , և չորս պատկա-
րեղ օրիորդաց՝ յայլոյ գաւառութեանց եղևոյ : Յորմէ
բարեբաղդարար երեւի թէ նուազողոյն է թիւ այնոցիկ ,
որք ընդ օտարականաց են ամուսնացեալ» :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՀԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Օրագրին 1032 թուոյն մէջ Ս. ստորագրութեամբ
յոգեւած մի կըկարգաւոր , որոյ հեղինակն Կ. Պօլսոյ
աղգային երկպառակութիւնը և յուզմունքը , որ մեր
աղգին հոգեւոր իշխանութեանը կը վերաբերին ,
բաղդատած է Գաղղիոյ կայսերական և հասարակա-
պետական կառավարութեանց հետ , և անոնց մէջ
պատահած երեւելի դէպքերը յառաջ բերած է ,
հաստատելու համար թէ մեր աղգային ժողովրդական
վեհապետութիւնը վտանդի մէջ կը գտնուի ի Պօլսոյ :

Սոսիւ թիւերն իշխանութեանէ ինչպէս ետեւ ,
սաստիկ ուսմկայետական Կամպէթայի ընթացքը ,
իր օրինակ՝ մեր աղգայնոց աչաց առջև կը դնէ . այլև
Սեփանի անկումէ ետեւ ու հասարակապետութեան
Փարիզի մէջ հաստատուելէ ետեւ , Կաթոլիկոս կայսեր
և իւր բռնավարական կուսակցութեան վարձեալ գոր-
ծիքներուն՝ իրենց նպատակին հասնելու համար ուսմ-
կաւարութեան անդի ծայրը անցնելն կը յիշէ :

Եւսակը ցաւակցութեան արժանի կը համարեմք
յիշեալ յոգեւած աղգոյն այս երազը , զոր կը տեսնէ
մեր խեղճ աղգին համար , որ բոլորովին զուրկ է ի-
քաղաքական իշխանութենէ , և շնորհիւ ի . Վրան
հոգեւոր վարչութեանէ ի զատ ուրիշ բան մի չունի և
չկրնար ունենալ . քանզի անկարելի է որ կառավա-
րութեան մէջ կառավարութիւն լինի :

Ուր պտաւ մեր աղգը ժողովրդական վեհապետու-
թիւն , որ յոգեւած աղգինը կը յորդորէ անոր իրաւ-
ունքը անվտանգ պահել , Եւրանը զոյց փոքրիկ ամա-
նի ջրոյն մէջ պատահած աննշան շարժում մը ի՞նչ
համեմատութիւն կրնայ ունենալ Սփիւրնոսի ահազին
ծովուն մէջ տեղի ունեցած ալեկոծութեանը հետ .
Գաղղիան 5000 միլիոն ֆրանք պատերազմի տուրանք
վճարեց , և կրնար նոյնչափ գումար ինքն ուլ առ-
նուլ իւր թշնամիէն :

Սեր խեղճ ու աղքատ Հայոց աղգը՝ որ հպատակ
է օսմանեան մեծազօր տէրութեան և նորա մարդասէր
ու հայրական կառավարութեան ներքե խաղաղութե-
ն անգործութեամբ կապի , ի՞նչ բան ունի անկախ
տէրութեանց հակադրական արարքներուն հետ , որք
յառաջ կը բերուին իրեւ օրինակ մեր աղգային հոգեւոր
վարչութեան :

Օրագրին տէր և պատասխանատու յարդոյ Խոճա-
սարեան Օղսէն Էփէնտին՝ ուշիմ և կենցաղազետ
փաստաբան մըն է . ուստի կը զարմանաւք թէ ի՞նչ
պէս իւր ուշադրութենէն վրիպէր է անտեղութիւնն
յոգեւածոյն , զորմէ են բանք մեր :

Պօլսոյ Վիթալ լրագիրն ևս՝ իւր 63 թուոյն մէջ
մեր աղգային լրագրաց ակնարկութիւն ընելով կըսէ :

«Եւսակը աղատութեան օրէնքը բնաւ մէկ ատեն
չեն իւր որ մէկ մարդ այնպէս լրբօրէն և հրապարա-
կաւ իւր աղգին իշխան և ամենէն Բարձրագոյն պա-
տանի վրայ և նախատական բառերով թշնամանէ
աղատութեան պատրուակին ներքե» :

Անշուշտ յիշեալ լրագիրը կուգէ ըսել իւր աղ-
գին հոգեւոր Հովիւը և բարձրագոյն հոգեւոր ատեա-
նը : Քանզի մեր աղգին իշխանը և վեհապետը՝ օ-
գոստափառ Սուլթանն է , և մեր ամենէն բարձրա-
դոյն ատեանը՝ Արքարութեւ բարձրագոյն ատեանն է :

Յայտնի է թէ Կ. Պօլսոյ Յոյն ժողովրդեան մէջ
ևս երկպառակութիւններ տեղի ունեցան ի մօտ աւ-
ուրս և կը շարունակուին :

Ինչպէս յիշեալ մայրաքաղաքին Հայոց մէջ , նոյն-
պէս և Յունաց մէջ պտնուեցան կուսակցութեանց
զլեւաւորներ՝ որք իրենց կամբը յառաջ տանելու
համար , միամիտ ժողովրդեան մէկ մասը զրդեղելով
ձեռներին մայր եկեղեցոյն մէջ սուրբ Պատարագի
ժամանակ անկարգութիւններ և խռովութիւններ
պատճառեցին , աղաղակելով թէ չենք ուզեր զՊատ-
րիարքը և այլն :

